ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 22-Ա 16 հունվարի 2026 թ.

ՄԱՆԱՆԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ «TOYOTA CAMRY 2.5» ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ (ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ JTNBF4FK703029402, ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇ՝ 022 HJ 61) ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի փետրվարի 18-ի N 163-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Մանանա Գալստյանին 2026 թվականի հունվարի 16-ին, մեկ օրով, գործուղել Ճամբարակ համայնք՝ համայնքի շինարարական ընթացիկ աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված՝ աշխատակազմին սպասարկելու նպատակով հատկացված «TOYOTA CAMRY 2.5» մակնիշի ավտոմեքենայի (նույնականացման համար՝ JTNBF4FK703029402, պետական հաշվառման համարանիշ՝ 022 HJ 61) շահագործումը և նյութական պատասխանատվությունը 2026 թվականի հունվարի 16-ին վերապահել Մանանա Գալստյանին:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները՝ վճարելով միայն օրապահիկ:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Մկրտիչ Ղազազյանին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ